ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ԹԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ

2022 ԹՎԱԿԱՆԻ ՄԻԱՄՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅԱՆ

ՈՒՂԵՑՈՒՅՑ

ԵՐԵՎԱՆ 2021

ՀՏԴ 373:911 (03)

ԳՄԴ 74.2+26.8 y2
Ա 653

Պատասխանատու՝ **ՍՈՒՍԱՆՆԱ ՍԱՐԳՍՅԱՆ**
ՄԵՐԻ ՍԱՐԳՍՅԱՆ

Գնահատման և թեստավորման կենտրոնը շնորհակալություն է հայտնում ՀՀ բուհերի աշխարհագրության մասնագետներին, ԿԳՆ կրթության ազգային ինստիտուտին, շտեմարանի աշխատանքային խմբին, ուսուցիչներին և բոլոր շահագրգիռ անձանց՝ ուղեցույցի նախագծի վերաբերյալ հայտնած կարծիքների, ներկայացրած առաջարկությունների և դիտողությունների համար:

Ա 653 Աշխարհագրություն: Միասնական քննության ուղեցույց: Գնահատման և թեստավորման կենտրոն:

ԳՄԴ 74.2+26.8 y2

ISBN 978-99941-864-5-7
©Գնահատման և թեստավորման կենտրոն, 2021 թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ ……...… 4

ԹԵՍՏԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ……....……..……...……...… 5

ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԻ ՁԵՎԱԹՂԹԻ ԼՐԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ 6

ԹԵՍՏԵՐՈՒՄ ՆԵՐԱՌՎԱԾ ՇՏԵՄԱՐԱՆԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐԻ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՀՆԱՐԱՎՈՐ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 12

ԹԵՍՏԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ ՆՅՈՒԹԸ..... 15

ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԻ ՁԵՎԱԹՈՒՂԹԸ ……..... 16

ՆԱԽԱԲԱՆ

«Աշխարհագրություն» առարկայի սույն ուղեցույցում ներկայացված են 2022 թ. միասնական քննության թեստերի կառուցվածքը, առաջադրանքների կառուցվածքային տիպերը, առաջադրանքներում ընդգրկվելիք ծրագրային նյութի շրջանակները, պատասխանների ձևաթուղթը և դրա լրացման կարգը:

Աշխարհագրության միասնական քննությունների համար որպես հիմք և սկզբնաղբյուր են ընդունվում «Աշխարհագրություն» առարկայի ուսումնական ծրագրերը և դպրոցական դասագրքերը, ինչպես նաև «Աշխարհագրություն» առարկայի միասնական քննության շտեմարանները:

Քննական թեստերը կազմվում են «Շտեմարաններում» առկա առաջադրանքներից և «Շտեմարանների» առաջադրանքների հիմքի վրա կազմված նոր առաջադրանքներից:

1. ԹԵՍՏԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Քննական թեստը ներառում է 70 առաջադրանք, որոնցից 55-ը (1-55-րդ)՝ ընտրովի պատասխանով առաջադրանքներ են, 13-ը (56-68-րդ)՝ կարճ պատասխանով առաջադրանքներ և 2-ը (69-70-րդ)՝ պնդումների փունջ՝ բաղկացած 6-ական պնդումներից: Ընտրովի և կարճ պատասխանով առաջադրանքներից յուրաքանչյուրի ճիշտ պատասխանին տրվում է 1 միավոր, իսկ պնդումների փնջին՝ առավելագույնը 6 միավոր:

Թեստի ընդհանուր միավորը 80 է:

Միասնական քննական թեստի առաջադրանքների կատարման համար տրվում է 180 րոպե:

Միասնական քննության միավորը հաշվարկվում է 20 միավորանոց սանդղակով՝ հիմնվելով ամբողջ աշխատանքից դիմորդի հավաքած միավորների վրա:

Թեստում ընդգրկված են առաջադրանքներ կառուցվածքային բոլոր տեսակներից և բովանդակային բոլոր բաժիններից:

Թեստի առաջադրանքների կառուցվածքային տեսակները

Առաջադրանքների կառուցվածքային տեսակները	***Առաջադրանքների քանակը***	***Առավելագույն միավորը***
Ընտրովի պատասխանով առաջադրանքներ	55	55
Կարճ պատասխանով առաջադրանքներ	13	13
Պնդումների փունջ	2	12
Ընդամենը	70	80

2. ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԻ ՁԵՎԱԹՂԹԻ ԼՐԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

1. ***Ընտրովի պատասխանով առաջադրանքներ***

Կառուցվածքը: Ձևակերպվում է հարցը կամ պահանջը և տրվում է պատասխանի չորս տարբերակ, որոնցից միայն մեկն է ճիշտ:

Նմուշ. **Ո՞ր պնդումն է ճիշտ:**

1) Աշխարհագրական լայնությունը երկրի մակերևույթի որևէ կետի հեռավորությունն է հասարակածից՝ արտահայտած աստիճաններով:
2) Խոշոր մասշտաբի քարտեզների խմբի մեջ մտնում են 1:1000000-ից ավելի մեծ մասշտաբի քարտեզներ:
3) Տարբեր քարտեզներից կազմված գիրքը կոչվում է ուրվագծային քարտեզ:
4) Քարտեզի և գլոբուսի վրա հասարակածին զուգահեռ տարված երևակայական շրջագծերը կոչվում են միջօրեականներ:

Նմուշ. **Ընտրել գետերի և ջրամբարների անվանումների համապատասխանությունների ճիշտ շարքը:**

1. Որոտան ա. Կեչուտ
2. Արփա բ. Ապարան
3. Քասախ գ. Սպանդարյան
4. Ախուրյան դ. Ախուրյան

1) 1 - ա, 2- բ, 3 - գ, 4 - դ
2) 1 - գ, 2 - ա, 3 - դ, 4 - բ
3) 1 - գ, 2 - ա, 3 - բ, 4 - դ
4) 1- ա, 2 - դ, 3 - գ, 4 - բ

Ձևաթղթի լրացման կարգը:

Այս առաջադրանքներին պատասխանելիս շրջանավարտը համապատասխան համարով առաջադրանքի ուղղահայաց սյունակի պատասխաններին հնարավոր չորս տարբերակներին վանդակներից մեկում պետք է դնի «X» նշանը: Օրինակ՝ եթե դիմորդը 7-րդ

առաջադրանքի համար ընտրել է 3-րդ պատասխանը, ապա դա պետք է նշի հետևյալ ձևով՝



2. Կարճ պատասխանով առաջադրանքներ

Կառուցվածքը: Տրվում է աշխարհագրական օբյեկտների, տեղանունների շարք, որի վերաբերյալ ձևակերպվում է պահանջը կամ հարցը: Դրան պատասխանելիս պետք է լրացնել մեկ կամ մի քանի թվեր:

Նմուշ: **59. Տրված երկրներից որո՞նք են միապետություններ:**

1. Իրան, 2. Ռուսաստան, 3. ԱՄՆ, 4. Իսպանիա, 5. Մեծ Բրիտանիա, 6. Գերմանիա, 7. Սաուդյան Արաբիա, 8. Չինաստան

Ձևաթղթի լրացման կարգը: Այս առաջադրանքներին պատասխանելիս անհրաժեշտ է գրել կարճ պատասխանը՝ համապատասխան առաջադրանքի հորիզոնական վանդակներից յուրաքանչյուրում գրելով մեկ թվանշան:

Օրինակ՝ եթե 59-րդ առաջադրանքի աշխարհագրական օբյեկտների շարքից ճիշտ են 4, 5 և 7 համարներով նշված օբյեկտները, ապա այն պետք է լրացնել հետևյալ ձևով՝

Գնահատման չափանիշը: Լիարժեք ճիշտ պատասխանի համար տրվում է մեկ միավոր, սխալ, թերի պատասխանի կամ պատասխանի բացակայության դեպքում միավոր չի տրվում:

Վերադասավորմամբ առաջադրանքներ: Անհրաժեշտ է վերադասավորել միավորները՝ ըստ պահանջի:

Նմուշ: **63. Տրված է Երկրի պատմության երկրաբանական ժամանակագրությունը: Վերադասավորել տրված ժամանակաշրջանները՝ սկսած ամենավաղից:**

1. Կավճ, 2 . Միոցեն, 3. Անթրոպոգեն

Ձևաթղթի լրացման կարգը:
Պատասխանը պետք է լինի թվերի շարք, որում թվերի հերթականության պահպանումը **պարտադիր է**: Տրված վանդակներից յուրաքանչյուրում պետք է գրել մեկ թվանշան:

63	2	1	3		

Գնահատման չափանիշը: Լիարժեք ճիշտ պատասխանի համար տրվում է մեկ միավոր, սխալ, թերի պատասխանի կամ պատասխանի բացակայության դեպքում միավոր չի տրվում:

Կարճ պատասխանով խնդիր-առաջադրանքներ:

Տրվում է խնդիր-առաջադրանք, որին պատասխանելիս նշվում է առաջադրանքի լուծումից ստացված պատասխանի թվային արժեքը, որը դրական ամբողջ թիվ է: Պատասխանում պետք չէ նշել չափման միավորը:

Նմուշ: **65. Երկու քաղաքներ հասարակածի վրա են: Դրանցից մեկը արլ. ե. 40°-ի, իսկ մյուսը՝ արմ. ե. 70°–ի վրա է: Որոշել քաղաքների ամենակարճ հեռավորությունը կիլոմետրերով:**

65	1	2	2	1	0

Նմուշ: **(66-67-րդ) Գետի ակունքի բացարձակ բարձրությունը 2200 մ է, իսկ գետաբերանինը՝ 1000 մ: Նրա երկարությունը 80 կմ է:**

66. Որոշել գետի անկումը:

67. Որոշել գետի թեքությունը:

66	1	2	0	0	
67	1	5			

Ձևաթղթի լրացման կարգը:

Այս առաջադրանքներին պատասխանելիս անհրաժեշտ է նախատեսված հորիզոնական հինգ վանդակներից յուրաքանչյուրում գրել մեկ թվանշան: Առաջադրանքի պատասխանը կարող է լինել 0-ից 99999-ը ոչ բացասական ամբողջ թվերից որևէ մեկը: Օրինակ՝ 65-րդ առաջադրանքի պատասխանը 12210 է, 66–րդինը՝ 1200, 67–րդինը՝ 15:

Գնահատման չափանիշը: Լիարժեք ճիշտ պատասխանի համար տրվում է մեկ միավոր, սխալ, թերի պատասխանի կամ պատասխանի բացակայության դեպքում միավոր չի տրվում:

3. Պնդումների փունջ

Կառուցվածքը: Որևէ թեմայի վերաբերյալ տրվում է 6 պնդում, որոնցից յուրաքանչյուրին հնարավոր է տալ երեք տիպի պատասխան՝ «Ճիշտ է», «Սխալ է» կամ «Չգիտեմ»: Այս առաջադրանքից հնարավոր է վաստակել առավելագույնը 6 միավոր:

Նմուշ: ***70.*** **ՀՀ կլիմայի վերաբերյալ տրված պնդումներից որո՞նք են ճիշտ կամ *սխալ*:**

1) Հանրապետության տարածքը արևադարձային կլիմայական գոտում է:
2) Տարվա տաք կեսին գերիշխում են Իրանական բարձրավանդակից թափանցող արևադարձային օդային զանգվածները:
3) Տարվա ընթացքում առավելագույն տեղումները լինում են նոյեմբեր–դեկտեմբեր ամիսներին:
4) Տարվա ընթացքում ամենաշատ ամպամած օրերը լինում են Գեղարքունիքի մարզում (Մարտունի):
5) ՀՀ–ում ամենաշատ տեղումներ լինում են Արագած և Կապուտջուղ լեռնագագաթներին:
6) Տարվա ցուրտ ժամանակահատվածում միջլեռնային գոգավորություններում դիտվում է ջերմաստիճանային շրջադասություն (ինվերսիա):

Ձևաթղթի լրացման կարգը: Պատասխանների ձևաթղթում պնդումների փնջի յուրաքանչյուր պնդման համար ներքևում տրված է երեք վանդակ: Տրված պնդման պատասխանը գտնելուց հետո անհրաժեշտ է դրան համապատասխանող վանդակում դնել «X» նշանը:

Օրինակ՝ 70-րդ առաջադրանքը պնդումների փունջ է և յուրաքանչյուր պնդման համար ընտրված պատասխանը լրացվում է հետևյալ ձևով՝

70	1	2	3	4	5	6
Ճիշտ է		X			X	X
Սխալ է	X		X	X		
Չգիտեմ						

Գնահատման չափանիշը

Յուրաքանչյուր պնդման դիմաց ճիշտ նշված «Ճիշտ է» կամ «Սխալ է» պատասխանի համար տրվում է մեկ միավոր: Յուրաքանչյուր սխալ նշված «Ճիշտ է» կամ «Սխալ է» պատասխանի համար առաջադրանքին տրվելիք միավորներից հանվում է մեկ միավոր: «Չգիտեմ» պատասխանի համար միավոր չի տրվում և չի հանվում: Եթե առաջադրանքի 6 պնդումներից ստացված միավորների գումարը դրական է, այն համարվում է այդ առաջադրանքի գնահատականը: Հակառակ դեպքում, այսինքն՝ երբ միավորների գումարը 0 կամ բացասական թիվ է, առաջադրանքի գնահատականը կլինի 0: Այսպիսով՝ գնահատվում է ոչ թե ամեն մի պնդում առանձին, այլ առաջադրանքն ամբողջությամբ:

Ձևաթղթում տրված է սխալ նշված պատասխանն ուղղելու 5 հնարավորություն, որից 2-ը՝ ընտրովի պատասխանով առաջադրանքների, 2-ը՝ կարճ պատասխանով առաջադրանքների, իսկ 1-ը՝ պնդումների փնջի համար:

Եթե անհրաժեշտ է փոխել սխալ նշված պատասխանը ընտրովի պատասխանով առաջադրանքներում, ապա դաշտի վերևի հորիզոնական վանդակներում պետք է գրվի առաջադրանքի համարը, իսկ նրանից ներքև գտնվող սյունակի համապատասխան վանդակներից մեկում դրվի «X» նշանը:



Սխալ նշված պատասխանը կարճ պատասխան պահանջող առաջադրանքներում փոխելու դեպքում հորիզոնական առաջին երկու վանդակներում գրվում է առաջադրանքի համարը, որից հետո հաջորդ հինգ վանդակներում լրացվում է պատասխանը:

Պնդումների վերջի սխալ նշված պատասխանը փոխելու դեպքում ուղղման դաշտի հոլիզոնական վանդակներում պետք է գրել առաջադրանքի համարը և պնդման համարը, իսկ նրանից հետո ճիշտ պատասխանին համապատասխանող վանդակում դնել «X» նշանը:

3. ԹԵՍՏԵՐՈՒՄ ՆԵՐԱՌՎԱԾ ՇՏԵՄԱՐԱՆԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐԻ ՀՆԱՐԱՎՈՐ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2021 թվականի քննական թեստերում շտեմարանային առաջադրանքները կարող են ներառվել որոշ փոփոխություններով՝ պահպանելով առաջադրանքի տեսակը և կառուցվածքը:

Ա) Կարող են փոփոխվել առաջադրանքում առկա թվային տվյալները:

Շտեմարանային առաջադրանքի և դրա փոփոխված տարբերակի նմուշօրինակ.

Շտեմարանային առաջադրանք.

Եթե քարտեզի թվային մասշտաբը 1 : 2 500 000 է, ապա դրա անվանական մասշտաբը կլինի.

1) 1 սմ - ում՝ 2,5 կմ
2) 1 սմ - ում՝ 250 կմ
3) 1 սմ - ում՝ 250 մ
4) 1 սմ - ում՝ 25 կմ

Փոփոխված տարբերակ.

Եթե քարտեզի թվային մասշտաբը 1 : 6 000 000 է, ապա դրա անվանական մասշտաբը կլինի.

1) 1 սմ - ում՝ 60 կմ
2) 1 սմ - ում՝ 60 մ
3) 1 սմ - ում՝ 600 կմ
4) 1 սմ - ում՝ 6 կմ

Բ) Նույն բովանդակությամբ տարբեր առաջադրանքներից պատասխանի տարբերակների համադրումով կարող է ձևավորվել նոր առաջադրանք՝ ըստ հետևյալ օրինակում ցույց տրված սկզբունքի:

Շտեմարանային առաջադրանքներ.

Առաջադրանք 1. **Ֆրանսիայի վերաբերյալ ո՞ր պնդումն է ճիշտ:**

1) Բնակչության թվով առաջինն է Արևմտյան Եվրոպայում:
2) Հյուսիսային ափերը ողողվում են Բալթիկ ծովի ջրերով:
3) Բնակչության գերակշիռ մասը զբաղված է արդյունաբերությամբ:
4) Գյուղատնտեսական կառուցվածքում գերակշռում է անասնապահությունը:

Առաջադրանք 2. **Ֆրանսիայի վերաբերյալ ո՞ր պնդումն է *սխալ*:**

1) Տարածքի մեծությամբ առաջինն է Արևմտյան Եվրոպայում:
2) Արևմտյան ափերը ողողվում են Թիսկայան ծոցի ջրերով:
3) Աշխարհում առաջինն է գինիների և պանրի արտադրությամբ:
4) Գյուղատնտեսական արտադրանքի 2/3ը տալիս է բուսաբուծությունը:

Առաջադրանք 3. **Ֆրանսիայի վերաբերյալ ո՞ր պնդումն է ճիշտ:**

1) Անդորրա գաճաճ պետությունը Իսպանիայի և Ֆրանսիայի միջև է:
2) Գյուղատնտեսության առաջատար ճյուղը բուսաբուծությունն է:
3) Տնտեսությունը զարգացման ագրարային փուլում է:
4) Թեթև արդյունաբերության ամենախոշոր կենտրոնը Մարսելն է:

Առաջադրանք 4. **Ֆրանսիայի վերաբերյալ ո՞ր պնդումն է ճիշտ:**

1) Էլեկտրաէներգիայի մեծ մասն արտադրվում է ջերմային էլեկտրակայաններում:
2) Մեծ Բրիտանիայից բաժանվում է Ջիբրալթարի նեղուցով:
3) Ըստ պետական կարգի՝ նախագահական հանրապետություն է:
4) Ֆրանսիային են պատկանում Սարդինիա և Կորսիկա կղզիները:

Նոր առաջադրանք. Ֆրանսիայի վերաբերյալ ո՞ր պնդումն է ճիշտ:

1) Հյուսիսային ափերը ողողվում են Բալթիկ ծովի ջրերով:
2) Տարածքի մեծությամբ առաջինն է Արևմտյան Եվրոպայում:
3) Տնտեսությունը զարգացման ագրարային փուլում է:
4) Էլեկտրաէներգիայի մեծ մասն արտադրվում է ջերմային էլեկտրակայաններում:

Նման փոփոխություններ հնարավոր են ոչ միայն ընտրովի պատասխանով առաջադրանքներում, այլև մյուս կառուցվածքային տեսակներում՝ և՛ կարճ պատասխանով առաջադրանքներում, և՛ պնդումների փնջում:

Գունավորվածները նոր առաջադրանքում ներառված տարբերակներն են:

4. ԹԵՍՏԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ ՆՅՈՒԹԸ

Թեստը պարունակում է աշխարհագրության դպրոցական ծրագրի բաժինները՝ հետևյալ **մոտավոր** համամասնություններով.

Հ/Հ	«Աշխարհագրություն» առարկայի հիմնական բաժինները	Մոտավոր մասնաբաժին (%)
1.	Ընդհանուր տեղեկություններ Երկիր մոլորակի մասին	9%
2.	Աշխարհագրական թաղանթ	18%
3.	Մայրցամաքներ և օվկիանոսներ	15%
4.	Հասարակական աշխարհագրություն: Աշխարհ	15%
5.	Տարածաշրջաններ և երկրներ	18%
6.	Հայաստանի աշխարհագրություն	18%
7.	Բնություն-հասարակություն փոխհարաբերություններին, մարդկության համամոլորակային հիմնախնդիրներ	7%

ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԻ ՁԵՎԱԹՈՒՂԹ

2022թ. միասնական քննություն

Պատասխանների ձևաթուղթ
Աշխարհագրություն

ազգանուն

անուն հայրանուն

անձնական համար

05

Թեստ №

Ընտրովի պատասխանով առաջադրանքներ

Պատասխանի հանգամանքը

	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18	19	20	
1																					1
2																					2
3																					3
4																					4

	21	22	23	24	25	26	27	28	29	30	31	32	33	34	35	36	37	38	39	40	
1																					1
2																					2
3																					3
4																					4

	41	42	43	44	45	46	47	48	49	50	51	52	53	54	55	
1																1
2																2
3																3
4																4

Կարճ պատասխանով առաջադրանքներ

56			
57	60	63	66
58	61	64	67
59	62	65	68

Պնդումների փունջ

69	1	2	3	4	5	6
Ճիշտ է						
Սխալ է						
Չգիտեմ						

70	1	2	3	4	5	6
Ճիշտ է						
Սխալ է						
Չգիտեմ						

Սխալ նշված պատասխանները փոխելու տեղը

	Ընտրովի	Կարճ	Պնդ. փունջ
1			Ճիշտ է
2			Սխալ է
3			Չգիտեմ
4			

Աշխատեք այս նախադասությունը

Ցանկալի եմ քննության կարգին: